



Media Release

5 October 2021



SBS կը փափաքի համայնքին տեսակէտը իմանալ կարենալ ձեւաւորելու համար SBS Ռատիօկայանի ապագան և լեզուի ծառայութիւնները:

Ապահովելու համար ժամանակակից Աւստրալիոյ կարիքները, SBS սկսաւ իր լեզուի ծառայութիւններու կանոնաւոր վերատեսութեան, որոնք կը տրամադրուին SBS Չայնասփիւռի միջոցով: Այսօր կը սկսին հանրային խորհրդակցութիւնները, հրաւիրելու համար տեսակէտներ ընտրութեան չափանիշներու նախագիծին վերաբերեալ:

SBS Լեզուի Ծառայութիւններու Վերատեսութիւնը գործընթաց մըն է որ տեղի կ'ունենայ հինգ տարին մէկ ներդաշնակուած ազգային Մարդահամարին հետ, ապահովելու համար որ SBS Չայնասփիւռի ծառայութիւնները կ'արտացոլան արագ փոփոխուող և երթալով աւելի այլազան հասարակութիւն մը: Ընտրութեան չափանիշները պիտի օգտագործուին 2021 Մարդահամարի տուեալներուն հետ միատեղ, որոշելու համար այն լեզուները որոնք պիտի սպասարկուին յառաջիկայ հինգ տարիներուն:

Լեզուի Ծառայութիւններու Վերատեսութիւնը կը ներառէ SBS-ի ձայնային և լեզուի տրամադրած ծառայութիւնները ներառեալ ձայնասփիւռ, SBS On Demand, ներբեռնելի ռատիօծրագիրներ և այլ թուային հարթակներ:

Վեց շաբաթ տեւելիք հանրային խորհրդակցութիւնները, որոնք կը սկսին այսօր և կը լրանան 12 Նոյեմբեր 2021-ին, կարելոր հնարաւորութիւն մըն է համայնքներուն համար որ նպաստեն SBS Չայնասփիւռի ծառայութիւններու ապագային և SBS-ի աւելի լայն լեզուի և ձայնային յայտագիրներուն: Բոլոր կարծիքները նկատի պիտի առնուին երբ չափանիշներու վերջնական ընտրութիւնը կատարուի:

SBS Չայնային և Լեզուի Բովանդակութեան Տնօրէն Տէյվիտ Հուա, յայտնեց որ “SBS եզակի հնարաւորութիւն ունի կապ հաստատելու Աւստրալիոյ տարբեր համայնքներուն հետ իր բազմամշակութային ծառայութիւններու և բազմաթիւ հարթակներու միջոցով: 45 տարիէ աւելի է որ կը շարունակենք հարմարիլ թէ ինչպէս համայնքներուն կը տրամադրենք նորարական և բովանդակակալից ծառայութիւններ, և այսօր այդ կը կատարենք, ձայնասփիւռի, առցանց, ներբեռնելի ռատիօծրագիրներու և app-երու միջոցով 60-է աւելի լեզուներով: Այս վերատեսութիւնը ձեւ պիտի տայ SBS-ի մինչ կը մօտենանք հիմնադրութեան 50րդ տարեդարձին:



“SBS-ի բազմամշակութային ծառայություններու կենսական դերը ցուցադրուեցաւ ՔՈՎԻԾ-19 համաճարակի ժամանակ, համայնքներուն տրամադրելով բեկումնային թարմացումներ և առողջապահական տեղեկութիւն իրենց նախընտրած լեզուով: Լեզուի Ծառայություններու Վերատեսութիւնը կարելոր հնարաւորութիւն մըն է ապահովելու համար որ կը շարունակենք արտացոլալ այսօրուայ Աւստրալիոյ համայնքներու կարիքները:

“Մեր լեզուի ծառայություններու կանոնաւոր թարմացումը, կարելի կը դարձնէ որ SBS աւելի լաւ ծառայութիւն մատուցէ մշակութային և լեզուական տարբեր ծագում ունեցող ամենամեծ համայնքներուն, ինչպէս նաեւ ծառայություններ մատուցելով նոր և շատ կարիքաւոր համայնքներուն: Այս գործընթացին մէջ մեր ունկնդիրներուն ձայն մը տալը, բեկումնային տարր մըն է, և մենք կը քաջալերենք համայնքները, Աւստրալիոյ տարածքին, որ իրենց կարծիքը արտայայտեն:”

Ընտրութեան չափանիշները պիտի վերջնականացուին մինչեւ Մայիս 2022, և բարեփոխուած SBS լեզուի ծառայությունները պիտի կիրառուին 2022 թուականի վերջաւորութենէն առաջ:

Ընտրութեան չափանիշներու հանրային խորհրդակցութեան ժամանակաշրջանը Հոկտեմբեր 5էն մինչեւ 12 Նոյեմբեր 2021-ն է: Տեսնելու համար ընտրութեան չափանիշներու նախագիծը և ձեր կարծիքը արտայայտելու համար այցելել sbs.com.au/consultation:

Յաւելեալ տեղեկութեան և հարցազրոյցի խնդրանքներու համար խնդրեմ կապ հաստատել Kate Warnock-ի հետ: kate.warnock@sbs.com.au | 0419 316 135